ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսումնական գործունեության մեթոդներ

Կատարող՝ Անահիտ Վռամի Մուրադյան

Առարկա՝ Հայոց լեզու

Ուսումնական հաստատություն՝ Սևանի Խաչատուր Աբովյանի անվան ավագ դպրոց

ՀՐԱԶԴԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **Ներածություն**.....3
2. **Ուսուցման գործունեության մեթոդներ**.....4
3. **Ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումը հայոց լեզվի դասերին (դասերի նկարագրություն, դասի օրվա պլան)**...10
4. **Եզրակացություն**.....27
5. **Օգտագործված գրականության ցանկ**.....28

Ներածություն

Ժամանակակից հայ հասարակությունն ապրում է կրթական բարեփոխումների նոր փուլում, որի երաշխիքն է «Հանրակրթության պետական չափորոշչի» հաստատումը ՀՀ կառավարության կողմից: Դպրոցներում ստեղծվում են բարենպաստ ուսումնական միջավայրեր, կիրառվում են աշակերտակենտրոն ուսուցման ու դաստիարակության փոխներգործուն մեթոդներ և մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն կտան հանրակրթությանը իրականություն դարձնելու իր բուն նպատակը, այն է՝ ձևավորել որոշակի կարողունակություններով զինված հայ քաղաքացի՝ պատրստ դիմագրավելու ցանկացած փոփոխության, քննական վերլուծության ենթարկելու իրադրությունը, քայլեր մշակելու, նախաձեռնող լինելու և առաջարկելու փոփոխություններ, պատրաստ լինելու հանրօգուտ գործունեության՝ հանուն իր երկրի բարօրության, պետականության ամրապնդման և բարգավաճման:

Հանրակրթության այս նպատակի իրագործմանը նպաստում են ուսուցման այն բազմաթիվ մեթոդները, հնարներն ու ձևերը, որ օգտագործում են մեր ուսուցիչները դասի ընթացքում:

Իմ աշխատանքը կառուցել եմ այնպես, որ ոչ միայն նկարագրեմ մեթոդը, նրա արդյունավետությունն ու թերի կողմերը, այլև գործնականում, իմ վարած դասերի օրինակով ցուցադրեմ այդ ամենը: Կարծում եմ՝ իմ հետազոտության ընթացքում ինքս էլ նոր շատ բան կյուրացնեմ և կկիրառեմ իմ աշխատանքում:

Նոր և շատ մեթոդների իմացությունը թեև անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ արդյունավետ դասավանդման համար:

Կարևոր է նաև մեթոդները հմտորեն համադրելու և նպատակահարմար կիրառելու մասնագիտական հմտությունը, ինչը ենթադրում է մասնագիտական լուրջ պատրաստություն, փորձառություն, նաև անձնային որոշակի որակներ:

Հատկանիշներ, որոնց մշտապես ձգտում է հայ ուսուցիչը:

ՈՒսումնական գործունեության մեթոդներ

Մեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ,գործիք և ուսումնասիրության արդյունք:

Լ.Վիգոտսկի

Մեթոդ բառը առաջացել է հունական methodus բառից, որ նշանակում է ճանապարհ:

Ուսուցման մեթոդը փոխներգործուն գործընթաց է ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում նախատեսված ուսումնառության բովանդակուրյամբ:

Ուսուցման մեթոդները լինում են՝ պասիվ, ակտիվ, ինտերակտիվ:

Պասիվ մեթոդը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ գլխավոր դերակատարը դասավանդողն է, իսկ սովորողները լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Սովորողի և դասավանդողի կապը պասիվ ուսուցման դեպքում պահպանվում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի միջոցով: Կրթական բարեփոխումների տեսանկյունից ուսուցման այս մեթոդը համարվում է ամենից անարդյունավետը, սակայն չնայած դրան՝ այն ունի մի շարք առավելություններ: Այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստական աշխատանք դասին և տալիս համեմատաբար մեծ ծավալով ուսուցման նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում: Այս առավելությունները հաշվի առնելով՝ շատ ուսուցիչներ պասիվ մեթոդը նախընտրում են այլ մեթոդներից: Փորձառու մասնագետի պարագայում հաճախ այս մեթոդը իրեն արդարացնում է: Պասիվ մեթոդի ամենատարածված ձևը **դասախոսությունն է:**

Ակտիվ մեթոդ

Այս մեթոդը սովորողի և դասավանդողի փոխադարձ սորձունեության ձև է, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում,և սովորողներն այստեղ ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են:

Շատերը հավասարության նշան են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև:

Չնայած իրենց ընդհանրությանը՝այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ: Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր:

Ինտերակտիվ մեթոդ

Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ («inter»-փոխադարձ, «act» -գործել) նշանկում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեուրյան մեջ են գտնվում սովորողներն ու դասավանդողները, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեուրյան մեջ են գտնվում միմյանց հետ, և ուսուցման գործընթացում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ: Նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Դասավանողը մշակում է դասի պլանը՝ կազմված ինտերակտիվ վարժություններից և առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում աշակերտը սովորում է նյութը: Ինտերակտիվ վարժությունների և սովորական առաջադրանքների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը: Ուսուցման մեթոդների դասակարգման գործում առավել տարածված է մի մոտեցում, ըստ որի՝ ուսուցման մեթոդները պայմանականորեն կազմում են երկու խումբ՝ ավանդական և ժամանակակից:

Արդյունավետ դասավանդում իրականացնող գործոններ են նաև մեթոդական հնարներն ու վարժությունները: Մեթոդը և հնարը նույնը չեն, ուղղակի ունեն որոշակի հարաբերություն: Եթե մեթոդը դեպի ուսումնական նպատակ տանող ճանապարհն է, ապա մեթոդական հնարներն ու վարժությունները ճանապարհի ընթացքի խնդիրները լուծելու, հանդիպող դժվարությունները հաղթահարելու միջոցներ են:

Վերջին շրջանում կրթության բնագավառում շատերը հակադրում են ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ոմանց կարծիքով այսօր սովորողներին հետաքրքիր չեն ավանդական մեթոդները, պետք է բացարձակապես առաջնորդվել ինտերակտիվ և

աշակերտակենտրոն մոտեցումներով: Սակայն, ըստ իս, կարևորը արդյունքն է, և ուսուցչին է տրված որոշելու, թե որ մեթոդների կիրառումը կապահովի դասի ընթացքում իր առջև դրված նպատակներին ու վերջնարդյունքներին հասնելը: Իմ աշխատանքի ընթացքում համոզվել եմ, որ ավելի լավ արդյունք եմ ունենում ավանդական, ակտիվ և ինտերակտիվ մեթոդների ու հնարների համակցման դեպքում: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, ուսուցչի բացատրական խոսքը կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման գործընթացում:

Ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշում կայացնում է ուսուցիչը:

Ժամանակակից ուսուցման գործընթացում
Ավելի հաճախ կիրառվող մեթոդներ

Մտքերի տարափ կամ մտագրոհ

Այս մեթոդը խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է: Այն նաև մտքերի տարափ են անվանում: Խմբի անդամների առջև կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց որևէ մեկնաբանություն կամ գնահատական տալու փորձին: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են գրատախտակի կամ թղթի վրա:

Մտագրոհի մեթոդով աշխատելու համար ընդունված են հետևյալ կանոնները՝

1. ցանկացած քննադատության բացակայություն
2. գաղափարների խրախուսում
3. մասնակիցների հավասարություն
4. զուգորդումների (ասոցիացիաների) ազատություն
5. բոլոր մտքերի գրառում

Մեթոդի առավելությունները

1. Խթանում է ստեղծագործական մտածողությունը:
2. Հեշտ է յուրացվում սովորողների կողմից:
3. Միտքը միտք է ծնում:
4. Խմբովի կազմվում է գաղափարների, առաջարկների ավելի լայն ցանկ, քան այն կաներ մեկ մարդը:

Մեթոդի սահմանափակումները

1. Մասնակիցների մեծ խմբի ներգրավվածության դեպքում ոչ բոլորը հնարավորություն կունենան ցանկացած մտքերն արտահայտելու և մի քանի անգամ խոսելու:

2. Մտագրոհը չի գործի, եթե խումբն ասելիք չունի:

3. Մտագրոհը գործընթաց է, որը միշտ անավարտ է և ոչ ամբողջական: Սա ընդամենը մեկ քայլ է պրոբլեմի լուծման ճանապարհին:

Վենի դիագրամ

Այս մեթոդը կարելի է օգտագործել նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները, երևույթները, անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու համար, օրինակ՝ գրական հերոսների համեմատական բնութագրերը ներկայացնելիս, գրողների երկերը համեմատելիս և այլն: Վենի դիագրամը հանդես է գալիս գծապատկերներով:



Վեբ – որոնում (Web-Quest)

Վեբ-որոնումը հետազոտության վրա հիմնված ուսումնական գործնուեություն է, որի ընթացքում աշակերտների ձեռք բերած գիտելիքները, տեղեկատվությունը հիմնականում ստացվում են ինտերնետից՝ կայքեր, հանրագիտարաններ, ուսումնական ռեսուրսներ, գրադարաններ, ֆորումներ:

Վեբ-որոնման մեթոդով ուսուցման հիմնական նպատակներն են՝

- գիտելիքի ձեռքբերում ու յուրացում,
- գիտելիքի ընդլայնում ու հստակեցում,
- տրամաբանական, վերլուծական և քննադատական մտածողության զարգացում,
- համագործակցական հմտությունների ձևավորում և զարգացում,
- տարբեր տեխմիջոցներից օգտվելու հմտություն և զարգացում

T-աձև աղյուսակ

T-աձև աղյուսակը օգտագործվում է միևնույն խնդրի երկու կողմերը համեմատելու համար:

T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: T-աձև աղյուսակի օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս՝ թե՛ բնագիտական, թե՛ հումանիտար:

m -աձև աղյուսակ

Այս մեթոդը ևս գծագրական դասակարգիչ է, որը միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք (դրական, բացասական, չեզոք) արտահայտելու հարմար միջոց է:

Պրիզմա

«Պրիզման» մտածողության ընթացքը պատկերավոր դարձնելու ձև է: Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող գաղափարի, հասկացության վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերահսկումն ու արձանագրումն է: Այն կիրառվում է դասի խթանման փուլում՝ ապահովելով ինչպես

աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը, այնպես էլ նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ սկիզբը:

Երեք բանալի և մեկ կողպեք

Կիրառվում է կշռադատման փուլում:

Բաղկացած է երկու կետից

1. Տեքստից ընտրվում է ստեղծագործության բովանդակությունը ներկայացնող երեք պարբերություն: Սրանք երեք բանալիներն են:

2. Կազմվում է մեկ նախադասությամբ (սեփական բառերով), որն արտահայտում է տվյալ տեքստի կամ ստեղծագործության բովանդակությունը: Սա է կողպեքը:

Հետաքրքիր և արդյունավետ մեթոդներ են նաև ձնագնդի, ինքնագնահատման աղյուսակ, կենաց ծառ, երկու աստղ և մեկ ցանկություն, ինքնագնահատման աղյուսակ, հինգ րոպեանոց շարադրանք, հասկացությունների աղյուսակ, կանխագուշակումների աղյուսակ, ԳՈՒՍ (գիտեմ-ուզում եմ սովորել-սովորել եմ), խճանկար, զրույց, բանավեճ, քառաբաժան և այլ մեթոդներ ու հնարներ:

Ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումը հայոց լեզվի դասերին

Նշանավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն իր հոդվածներից մեկում ճարտարապետությունը համեմատել է քերականության հետ: Նրա համոզմամբ ինչպես մայրենի լեզվի քերականությունն իմացող մարդը չի կարող սխալ գրել կամ խոսել, որքան էլ օտար բառեր գործածի, այդպես էլ ազգային ճարտարապետության քերականությունն իմացող ճարտարապետը չի կարող սխալ կառուցել, որքան էլ օտարամուտ տարրեր օգտագործի շինության մեջ**:** «Ամենադժվարը հենց սա է. իմանալ քերականությունը, գիտենալ կառուցվածքը և երբեք չվախենալ օտար էլեմենտներից, ասինքն՝ բառերից»,-գրել է նա և որպես իր մտքի փայլուն վկայություն՝ բերել Ալ. Թամանյանի նախագծով կառուցված կառավարական տունը՝ հայ ճարտարապետության պարծանքը: Նույն միտքը կարող ենք հաստատել լեզվից բերված օրինակներով: «Կկապնվենք», «Կզանգվենք», «Թարմեցնող բույր ունի», «Ճյուղից բռնվեք»,-լսում ենք հաճախ: Սրանք հայերեն չեն, թեև բոլոր բառերը հայերեն են: Ուրեմն՝ կարևոր են ոչ այնքան բառերը (թեև հայերեն համարժեքներ ունենալու դեպքում պետք չէ օտար բառեր

գործածել), որքան կառուցվածքը, որ հարազատ է մայրենի լեզվամտածողությանը, կարևոր է լեզվի ոգին, իսկ դա արտահայտվում է քերականության մեջ և նրա միջոցով:

Հանրակրթական դպրոցներում հայոց լեզվի ուսուցման և ուսումնառության նպատակները

1. Սովորողների մեջ ձևավորել հայեցի լեզվամտածողություն, որն արտահայտվում է հայերենով բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու կարողությունների դրսևորմամբ:

2. Զարգացնել սովորողների հաղորդակցական կարողությունները:

3. Ուսումնական այլ բնագավառներում ձևավորել և զարգացնել տարբեր թեմաներով կապակցված խոսք կազմելու կարողության ձևեր:

Հայոց լեզվի ուսուցիչներիս նպատակն է սովորողի մեջ մշակել և կատարելագործել ժամանակակից գրական հայերենի նորմային համապատասխան խոսք կառուցելու, իր խոսքը վերահսկելու, բառարանային, ժարգոնային արտահայտություններից, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու, կարդացածն ինքնուրույնաբար մեկնաբանելու կարողություններ:

Ծեշտադրվում են նաև բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատու գրականությունից, տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու, իր տարիքին և կրթական փուլին համապատասխան գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականություն կարդալու, կարդացածը նորովի՝ ոճական տարբեր սկզբունքներով վերաշարադրելու և համառոտագրելու հմտությունների մշակումը, գործնական բնույթի զանազան փաստաթղթեր կազմելու կարողությունը, ինչպես նաև տարբեր իրադրություններում համապատասխան խոսքային վարքագիծ դրսևորելու ունակությունը: Ահա այս նպատակներին հասնելու քայլեր են ստորև իմ ներկայացրած դասերի նկարագրությունները:

Դպրոցը-Սևանի ավագ դպրոց

Դասարանը- 10-րդ դասարան, հումանիտար հոսք

Դասի թեման և տեսակը- «Բառակազմություն» բաժնի ամփոփման դաս

Դասի տևողությունը- 45 րոպե

Նպատակները՝

1) խորացնել միջին դասարաններում անցած գտելիքները բառակազմության վերաբերյալ

2) տարբերակել արմատ և ածանց, հիմք և վերջաբորություն, ածանց և վերջավորություն հասկացությունները

3) տարբերակել ածանցների իմաստային տեսակները, միևնույն ածանցների՝ տարբեր խոսքի մասեր կազմելու հատկությունը: Օրինակ՝ ական-տեսլական, հուզական (գոյական և ածական), իչ-սուլիչ, հուզիչ (գոյական և ածական):

4) Ճանաչողական, հաղորդակցական հմտությունների և կարողությունների զարգացում

Ուսումնական նյութեր՝ «Հայոց լեզու և հայ գրականություն» շտեմարաններ (1,2) 2019 թ.

«Բառագիտություն» (Յու.Ավետիսյան, Հ.Զաքարյան), դպրոցական ուղղագրական, բացատրական, հոմանիշների, բառակազմական բառարաններ, Հ.Աճառյան, «Արմատական բառարան»: Եղ. Չարենցի և Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների գրքերը:

Օգտագործվող մեթոդներ և հնարներ՝ ԽԻԿ համկարգը, T-աձև, m-աձև աղյուսակներ, մտքի քարտեզագրում, դասախոսություն վեբ-որոնում:

Դասարանը նախօրոք բաժանվել է 2 խմբի, որոնցից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի պարզ, բարդ, ածամցավոր և բարդ ածանցավոր բառերի կազմության առանձնահատկությունները:

Որպես տնային աշխատանք՝ ինքնուրույն աշխատանքներ են հանձնարարվել:

Դրանք են՝

ա) օգտվելով բառակազմական, բացատրական, ստուգաբանական բառարաններից՝ բառակազմորեն բացատրել և ստուգաբանել ձեզ համար հետաքրքրություն նեկայացնող բառեր (առնվազն 5 բառ),

բ) պատրաստել գրական օրինակներ՝ խմբավորելով պարզ և բաղադրյալ բառերը Տ-աձև աղյուսակում,

գ) հապավումների բառարանից օգտվելով՝ դուրս գրել մի շարք նորակազմ հապավումներ և բացատրել կազմությունը,

դ) փորձել քարտեզագրել «Բառակազմություն» բաժինը ամբողջությամբ կամ առանձին տեսակները,

ե) գտնել բառակազմական բաղադրիչներ, որոնք մի դեպքում ածանց են նշանակում, մեկ այլ դեպքում՝ արմատ (օր՝**ամեն**ատես (արմատ)-**ամեն**ահին (ածանց),

զ) բառակազմական բառարանից օգտվելով՝ բացատրել ածանցի իմաստային տեսակները, գտնել տարբեր խոսքի մասեր կերտող ածանցներ և օրինակներով ցույց տալ:

Դասի ընթացքը

Խթանում. Կիրառվեց մտագրոհ մեթոդը

- Ի՞նչ է ուսումնասիրում լեզվաբանության «Բառագիտություն» բաժինը:
- Որո՞նք են բառի հիմնական բաղադրիչ մասերը, տարբերակի՛ր դրանք:
- Քանի՞ տեսակ են լինում արմատները (ինքնուրույն գործածվող և ինքնուրույն գործածություն չունեցող, հնչյունափոխված և անհնչյունափոխ):
- Տարբերակի՛ր ածանց և վերջավորություն, բառահիմք և արմատ:
- Որո՞նք են բառակազմության եղանակները (ածանցում, բառաբարդում, հապավում):
- Ինչ՞ է ածանցումը. ածանցների առաջացման ճանապարհները (արմատների իմաստի մթագնում, վերջավորություններից առաջացած ածանցներ՝ հոլովական, դերանվանական փոխառյալ):
- Ածանցների տեսակները՝ ըստ խոսքի մասեր կազմելու հատկության և ըստ դիրքի:
- Ի՞նչ է բառաբարդումը: Բարդ բառերի տեսակները (համադրական և հարադրական): Թվարկել կրկնավոր, հարադրական և համադրական բարդություններ
- Ի՞նչ է հապավումը. կազմության եղանակները, տեսակները:

Իմաստի ընկալում

Աշակերտները հարցերին պատասխանում են՝ օրինակներ գրելով գրատախտակին և բացատրելով:

Մտագրոհից աշխուժացած՝ աշակերտական խմբերը հերթով ներկայացնում են իրենց ինքնուրույն աշխատանքները:

1-ին խումբ-օգտվելով Ս.Գալստյանի «Դպրոցական բառակազմական բառարանից», Հր. Աճառյանի «Արմատական բառարանից», Ստ. Մալխասյանցի «Բացատրական բառարանից» ՝ ներկայացրին **դեղին, դեղձան, ազոխ, լաջվարդ** բառերի կազմությունը և ստուգաբանությունը: Այսպես՝ **«դեղին»** դեղ+ին (ածանցավոր բառ է), բնիկ հայերեն բառ, արմատն է «դեղ», որի 1-ին և հիմնական հատկությունն է՝ «խոտ»: Քանի որ խոտերը հին բժշկության մեջ գործածվել են բուժման նպատակով, «դեղ» բառն էլ գործածվեց «բժշկական խոտ» նշանակությամբ:
Այժմ գույն է նշանակում ՝ դեղին տերև: Նրանցից կազմվել են նոր բառեր՝ դեղնագունել, դեղնամորթ, դեղնականաչ և այլն:
Հետաքրքիր է, որ այլ լեզուներում «դեղին» բառը նշանակում է կանաչ: **«Դեղձան»** բառը դեղին բառից է, որը կարմրադեղինն է, խարտյաշը: Նույնպես բնիկ հայերեն բառ է, ծագում է «դեղ» արմատից՝ **ձ** աճականով և **ան** մասնիկով: **Դեղձան** բառը կազմությամբ ածանցավոր բառ է:
«Ազնիվ» =ազն (ազգ, սերունդ,ցեղ) + իվ): Ածանցավոր բառ է,նշանակում է «լավ ազգից, ընտիր տեսակի, նվիրական»: Նորակազմություններ՝ ազնվամեծար, ազնվաշուք,ազնվափայլ, գերազնիվ և այլն:
«Ազոխ» -խակ խաղող (պարզ բառ):

2-րդ խումբ
«Անագորույն» - «անգութ», «անողորմ», գործածվել է նաև «անխելք, անմիտ» իմաստով: Արդի գրական հայերենում ընդունված է միայն անագորույն բառը առաջին իմաստով: Դիտվում է որպես պարզ բառ:
«Լաջվարդ» - քար է, որից ընտիր կապույտ ներկ են պատրաստել, ուստի գործածվում է «երկնագույն», «կապտագույն» իմաստով, հայտնի է նաև բառի «լազվարթ» ձևը: Կազմությամբ պարզ բառ է:
«Համբույր» (պարզ բառ) = համ (ամբողջ) +բույր, մեկ բույր, մեկ շունչ ունենալը:
«Խավարտ» պարզ բառ **1**. բանջարեղեն, ուտելիք, որ տրվում է մսից պատրաստված կերակրի հետ:

2. բանջարեղեն, կանաչեղեն, ամոքանք, **3.** խավոտ բույս:

«Հնոց» =հուն (կրակ)+ոց, վառարան, բով, հուն բառի առաջին իմաստն է գետի ծանծաղ անցատեղ, ելք:

«Ականակիտ» -պարզ, վճիտ, զուլալ, շողշողուն, պարզ բառ:

1-ին խումբ -Վ. Տերյանի «Ոսկեհանդերձ եկար» բանաստեղծությունից դուրս էր գրել պարզ և բաղադրյալ բառերը՝ խմբավորելով Տ -աձև աղյուսակում:

2-րդ խումբ -ընտրելով Ավ. Իսահակյանի «Արագածին» բանաստեղծությունը՝ ավելի մանրակրկիտ աշխատանք էր ներկայացրել՝ նշելով նաև բաղադրյալ բառերի տեսակները:

Առաջին խումբ

Պարզ բառեր	**Բաղադրյալ բառեր**
աշուն	ոսկեհանդերձ
տերևներով	միգասքող
դանդաղ	տխուրաչյա
ոսկով	քնքշաշրշյուն
մետաքս	նայված
ավաղ	խորին
օրոր	խորհրդավոր
արև,երգ	հուշիկ
փափուկ	ամենօրոր,շրշյուն
հարազատ	բեկում,ողջույն
կրկին,անջատ	քնքշագին

Երկրորդ խումբ

Պարզ բառեր	**Բաղադրյալ բառեր**		
Արագած ալմաստ վահան թուր գագաթ վրան,ամպ, սեգ,բույր ժայռ,արծիվ, բույն,առու, պերճ,գոտի, աղբյուր,վտակ, փեշ,թիթեռ,ծաղիկ, երազ,հազար,գույն,անուն	**ածանցավոր**	**բարդ**	**բարդածանցավոր**
	կայծակեղեն թափառական լճակ,մեջք փայլուն խոսք աբրեշումե թագուհի բուրում	լույս-փիրուզ ոսկեհյուս գիշեր ու զօր գիլ ու գլոր ծիրանավառ	հուր-հրեղեն թռչող-ճախրող զառ ու զարմանք ծվեն-ծվիկներ

1-ին խումբ -Т –աձև աղյուսակով ներկայացրին բառակազմական բաղադրիչներ, որոնք մի դեպքում ածանց են, մի դեպքում՝ արմատ:

Ածանց	**Արմատ**
Ամենամեծ, **վեր**ադարձ, **շար**ունակ, **շար**ադրել, լավա**գույն**, խստա**գույն**, սրտա**գին**, խորա**գին**, **ստոր**ադաս, **ստոր**ակետ, **փոխ**արքա, **փոխ**ադարձ, **համ**ընթաց, **համ**ընդհանուր, **բաց**ակա:	**Ամեն**ագետ, **ամեն**ագնաց, սրճա**գույն**, ան**գին**, գլխա**գին**, փոխնիփոխ, **համ**եղ, **համ**եստ, **նախ**որդ, **նախ**նի, **հակ**ամետ, **շար**ք, **շար**ական, **ստոր**ություն,**հակ**ում **փոխ**անորդ, **բաց**ատ**, վեր**ուստ **բաց**վածք, **ստոր**ին **վեր**ին:

2-րդ խումբ-ներկայացրեց ածանցներ, որոնք կազմում են տարբեր խոսքի մասեր

Ածանց	**Ածական**	**Գոյական**
-ական	հայրական	տեսլական
-անոց	լիտրանոց	/ մտատիպար/
-իկ	փոքրիկ	հիվանդանոց
-իչ	հուզիչ	մարտիկ
-ալի	հյութալի	ուսուցիչ
-ենի	մայրենի	բանալի
-եղեն	հրեղեն	տանձենի
-ուչ	վայելուչ	ամանեղեն
արտ-	արտահայտիր	տեսուչ
հակ-	հակադարձ	արտերկիր
համ-	համահունչ	հակագազ
-ածո	բրածո	համաժողով
գեր-	գերադաս	պահածո
վեր-	վերահաս	գերմարդ
		վերհուշ

Կշռադատում և գնահատում

Խմբերին տրվեցին նոր առաջադրանքներ

1-ին խումբ՝

ա) ցույց տալ տրած բայերի հիմքերը՝ առանձնացնելով պարզ և ածանցավոր բայերը. **բռնել, մտնել, հիանալ, թռչել, սովորել, արտագրել, սիրվել, փշրել, մոտեցնել, մտորել, գրոտել, ծամծմել, սրբագրել, կանչել, կառչել:**

բ) Ձեր իմացած արմատներով և ածանցներով կազմել **գարունը, առվակը, անտառը** բնութագրող բարդ և բարդածանցավոր բառեր:

գ) Հետևյալ կրկնավոր բարդությունները գործածել նախադասություններում մեկ որպես մակբայ, մեկ որպես ածական. **տաք-տաք, փունջ-փունջ, հեռու-հեռու, խումբ-խումբ**:

դ) Տրված բառից որքան հնարավոր է բառեր «քամիր». **կատարելագործվել** (օր՝ կատար, գործ):

2-րդ խումբ

ա) հետևյալ բառերից առանձնացնել արմատները, վերականգնելով անհնչյունափոխ ձևերը՝ խմբավորել ըստ ինքնուրույն գործածվողների և չգործածվողների. **մրգային, տնակ, փառք, հանք, պայթյուն, սրտային, սահանք, մթնել, պտղավետ, բուժիչ:**

բ) Թվել հարադրավոր բայեր,որոնք նաև դարձվածքներ են (բացատրել իմաստները):

գ) Բացատրել հետևյալ փոխառյալ հապավումները.

ՅՈՒՆԵՍԿՕ, ՆԱՏՕ, ԲԻԲԻՍԻ, ՍԻԷՆԷՆ

դ) Արտասանել Եղ.Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը, առանձնացնել ածանցավոր, բարդ և բարդածանցավոր բառերը:

4) Յուրաքանչյուր խմբին տրվեց պնդումների փունջ, որ գրված էր էլեկտրոնային գրատախտակին: Աշակերտներից պահանջվեց պատասխանել՝ օրինակներ բերելով:

Պնդումների փունջ

1-ին խումբ

ա) Նախածանց և վերջածանց ունեցող բառերը բարդածանցավոր են:

բ) Գլխագին, կարգին, սակագին, ողբագին բառերի մեջ կա (ա)գին ածանցը:

գ) Միևնույն բառը չի կարող ունենալ երկու նախածանց:

դ) Գծիկով գրվող բառերը կարող են լինել բարդածանցավոր:

ե) Հանրաքվե, աշտե, սաթե, հրե, բառերը ածանցավոր բառեր են:

զ) Բարդության տեսակ են հապավումները:

է) **-Ատ,-ական,-իկ-ու** ածանցներով կրելի է կազմել միայն ածականներ:

ը) Ցավալլուկ, սրտմաշուկ, բամբուկ, բանուկ բառերը վերջանում են **ուկ** ածանցով:

թ) Բառերի քերականական փոփոխությունները կատարվում են միայն բառի վերջից:

ժ) Բարդ բառերում հանդես եկող **յ** կիսաձայնը միշտ ձայնակապ է:

2-րդ խումբ

ա) Արմատները իմաստ են արտահայտում,ածանցները՝ոչ:

բ) Եռաժանի, ինքնաեռ, եռոտանի, եռյակ բառերն ունեն ընդհանուր արմատ:

գ) Հապավումների բոլոր տեսակները բարդ կամ բարդածանցավոր բառեր են:

դ) Հաշվեգետ, ծաղկեփունջ, կարեվեր, ագեվազ բառերը անհոդակապ բաղադրություններ են:

ե) Դիակապուտ բառի արմատը **կապելն** է:

զ) Հաշվետու, տեղեկատու, կծու, ծախու բառերում **ու**-ն վերջածանց է:

է) Ածանցները և վերջավորությունները փոխում են բառի իմաստը և նոր բառ կազմում:

ը) Տնետուն, բերնեբերան, գյուղեգյուղ բառերում **ե**-ն հոդակապ է:

թ) Կրկնավոր բարդությունները լինում են միայն հարադրություններ և գրվում են գծիկով:

ժ) Եթե բառը ունի մի քանի վերջավորեւթյուն, ապա բառի հիմքը վերջին վերջավորությունից առաջ ընկած մասն է:

5.Կատարվեց մտքերի քարտեզագրում

Ա.



Բ.



Խմբերի աշխատանքները ստուգվեցին և գնահատվեցին**:**

Տնային աշհատանք-Կազմել տեքստ՝ գործածելով նոր սովորած բառերը:

2.Դասի թեման՝ Ածականի և մակբայի համեմատական քննություն:

Նպատակը՝

1.Հիմնական դպրոցում անցած գիտելքների վերհիշում և ամրապնդում:

2.Բառապաշարի հարստացում, մակբայի ոճական յուրահատկությունների բացահայտում:

3.Կապակցված խոսքի զարգացում:

Ուսումնական միջոցներ- Աբու-Լալա Մահարի պոեմի 3-րդ սուրահը: Օգտագործվող

Մեթոդներ և հնարներ՝ ԽԻԿ համակարգ. Վենի դիագրամ, եռաթև աղյուսակ, կմախք, հնգյակ,խմբային և անհատական աշխատանքներ:

Խթանման փուլ: Կարող ենք կիրառել Վենի դիագրամը:



Կիրառվում է համեմատության եռաթև աղյուսակը.

Նմանությունը	**Տարբերությունը**	
	Ածական	**Մակբայ**
1.Բառեր.կազմությունը	Առարկայի որակ, որպիսությունը ցույց տվող բառեր, ածականակերտ ածանցներ	Գործողության ձև, տեղ, չափ, ժամանակ, ցույց տվող բառեր, մակբայակերտ ածանցներ
2.Նյութական խեսքի մասեր են, ունեն վերաբերմունքային կողմ, աստիճանավորում	Պատասխանում է ինչպիսի՞, ո՞ր հարցերին	Պատասխանում է ինչպե՞ս, ու՞ր, որտե՞ղ, ե՞րբ, որքա՞ն, ի՞նչ չափով հարցերին
3.Կարող են ունենալ հոմանիշ, համանուն տարբերակներ, հանդես գալ դարձվածքների կազմում,		

4.Քերականական հատկանիշներ	Ունի 2 տեսակ՝որակական և հարաբերական	Ունի 4 տեսակ՝տեղի, ձևի, չափի, ժամանակի
5.Կարող են կիրառվել ուղիղ և փոխաբերական իմաստով	Մակդիր	Մակդիր, փոխաբերություն

Իմաստավորում- Ձևավորել 6 խումբ՝ ըստ հորիզոնական կտրվածքի: Աշխատել խմբերով:

Մեթոդը՝ հետազոտական-որոնողական, աշխատանքի ձևը՝ խմբային:

Իմաստի ընկալման փուլում՝ նշվածների ապացուցում տեքստի հիման վրա: Սովորողներին բաժանում են Աբու-Լալա Մահարի պոեմի 3-րդ սուրահի պատճենված տեքստերը:

Յուրքանչյուր խումբ առանձնացնում է ածականները և մակբայները, ապա աշխատում են՝ ըստ

տվյալ հորիզոնական կտրվածքի առաջադրանքի: Օրինակ՝ 1-ին խումբը առանձնացնում է կազմությամբ պարզ, բարդ, ածանցավոր և բարդ ածանցավոր ածականներն ու մակբայները:

Օրինակ՝

	Պարզ	**Պարզ ածանցավոր**	**Բարդ**	**Բարդ ածանցավոր**
Ածականներ	հեզ	անսկիզբ	լուսավառ	
Մակբայներ	մեղմ	անձայն	միաչափ դույզն-ինչ	

2-րդ խումբը փորձում է կազմել հոմանիշային շարքեր, օրինակ՝ չքնաղ, աննման, դյութիչ՝ և՛ ըստ թեստի, և ՛ ինքնուրույն: Հետաքրքիր աշխատանք կարելի է կատարել աստիճանավորմամբ:

3-րդ խումբը կարող է առանձնացնել ածականների և մակբայների շարահյուսական կիրառությունները: Օրինակ՝ «Աշխարհն էլ ասես մի հեքիաթ լինի՝ անսկիզբ, անվերջ հրաշք դյութական...»–որոշիչ: «Հանգիստ, միաչափ քայլում էր առաջ հեզ լուսնկայի շողերի միջով»-ձևի, տեղի մակբայ: Հանձնարարել խմբերին կազմել «Հնգյակ» կամ «Կմախք»՝ բնութագրելով ուսումնասիրվող խոսքի մասերը: Օրինակ՝ «Հնգյակ»

Ածական

Որակական, հարաբերական

Համեմատվող, աստիճանավորվող, կիրառվող

Առարկան բնութագրող, հատկանշող բառ է:

Հատկանիշ

«Կմախք»- Մակբայ

1. Հանգամանք
2. Նյութական, բայց չթեքվող
3. Լինում են տեղի, ժամանակի, ձևի, չափի
4. Ե՞րբ, որտե՞ղ, ինրպե՞ս, ի՞նչ չափով
5. Նախադասության մեջ դառնում է պարագա:

Ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը, քննարկում բոլորով:

Կշռադատում

Կիրառել ինքնուրույն-ստեղծագործական աշխատանքների տարբեր ձևեր:

Օրինակ՝

1. Կազմել ընտրված ածականների, մակբայների հոմանիշային շարքերը:
2. Տվյալ ածականը կամ մակբայը գործածել փոխաբերաբար:
3. Հիշել և գրառել դարձվածքներ տվյալ ածականներով և մակբայներով:
4. Հիշել տրված ածականի կամ մակբայի՝ այլ հեղինակի կիրառությունները:

Օրինակ՝

...Աղբյուրների նման մեղմ կարկաչելով.../Ավ. Իսահակյան/

...Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց.../Վ.Տերյան/

5.Հիշել ածականի կիրառության գրաբարյան կիրառություններ /խարտեաշ պատանեկիկ,

տարբերությունները ժամանակակից գրական լեզվից, ուսուցչի օգնությամբ անել եզրահանգումներ:

6.Գրել տասրոպեանոց շարադրանք ածականների գործածությամբ,նշել ածականների ոճական դերը, մակդրային կիրառությունները:

7.Նույնատիպ աշխատանքը մակբայների վերաբերյալ հանձնարարել տնային աշխատանք:

Սևանի Խաչատուր Աբովյանի անվան ավագ դպրոց

Հայոց լեզվի և գրականության մասնախումբ

Ուսուցիչ՝ Անահիտ Մուրադյան

Դասի պլան

Ամսաթիվ	20.03.23
Դասարան	10-րդ տնտեսագիտական/2-րդ խումբ/
Առարկա	Հայոց լեզու
Թեմա	Հապավումը՝որպես բառակազմուրյան եղանակ
Դասի կառուցվածքը	Համակցված դաս
Դասի նպատակը	-Խորացնել և ամրապնդել բառկազմության վերաբերյալ ունեցած գիտելիքները -Հարստացնել բառապաշարը -Զարգացնել հաղորդակցական հմտությունները

Վերջնարդյունքներ	Սովորողը կիմանա՝ -ինչ է հապավումը, փոխառյալ հապավումը, տեսակները, գրության կանոնները Սովորողը կկարողանա՝ -Կազմել տառային հապավումներ -Բացել տառային հապավումները -Բառակապակցությունները վերածել հապավումների -Բացել հապավումները, կիրառել նախադասություններում
Ուսումնական նյութեր ռեսուրսներ	Դասագիրք, աշխատանքային տետր, հեռախոս
Դասի ընթացքը	-Տնային աշխատանքի ստուգում, սխալների ուղղում: -Հին դասի ամփոփում հարցերով: -Նոր թեմայի հետ կապված որոշակի տեղեկություն տալ, ապա խմբերին հանձնարարել կարդալ նոր թեման: -Խմբերը սովորած նյութը ներկայացնում են. • տալիս են հապավման սահմանումը, • հապավում կազմելու նպատակը, • տեսակները, • փոխառյալ հապավումները, • հապավումների հետ կապված ուղղագրությունը: -Կատարվում են վարժություններ, -Վեբ-որոնեում՝ օգտվելով նախարարությունների կայքէջերից, օրինագծերից, բառարաններից՝ առանձնացնել հապավումները և խմբավորել ըստ բնագավառների՝ իրավաբանական-տնտեսագիտական: • Ամփոփել աշխատանքները • Լրացնել բացթողումները, հարցերով ամփոփել թեման

	• Կատարել դասագրքի առաջադրանքներից N19,20/էջ 111-112/
Գնահատում	Կատարել փոխադարձ գնահատում
Անդրադարձ	Ի՞նչ նոր բան իմացաք Ի՞նչը կարող էիք ավելի լավ անել

Եզրակացություն

Ներկայացնելով թեմայի ուսումնասիրությունը՝ փորձեցի մեկ անգամ ևս ցույց տալ, որ ուսուցման հաջողությունը ապահովող գործոնների շարքում կարևոր են ուսուցչի՝ ոչ միայն ուսումնական նյութի բովանդակային իմացությունը, այլև տարբեր մեթոդների իմացությունը և դրանք ստեղծագործաբար կիրառելու կարողությունը: Մեթոդների ընտրությունը և կիրառումը կապված են բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրականում լուծում կարող են ստանալ միայն լավ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Աշակերտը դպրոցում պիտի սովորի մասնակցել հասարակական կյանքում կատարվող տեղաշարժերին, վարժվի համագործակցության և արդյունավետ շփումների, ձեռք բերի կարողունակություններ, հմտություններ, նախապատրաստվի բարիք արարելուն: Մեզ՝ մայրենի լեզվի ուսուցիչներիս է տրված սերմանել սեր մեր լեզվի՝ որպես պետական խորհրդանիշի և ազգային անվտանգության երաշխիքի հանդեպ: Կարծում եմ՝ հայոց լեզվի ուսուցչին է վերապահված դառնալու այն կայծը, որից պիտի բռնկվի գիտելիքների ջահը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ. Ձևաբանություն, Բառագիտություն, Եր.,Զանգակ-97, 2008
2. Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր.,ԵՊՀ հրատ.,2018
3. Բակունց Ա.,Պատմվածքներ, Եր., Լույս,1975
4. Հանրակրթության պետական չափորոշիչներ, հեղինակ՝ ՀՀ ԿԳՄՍՆ, 2021
5.Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Եր., Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, 2020.
6. Ս. Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Եր.,2014
7. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, 2008, Կրթության ազգային ինստիտուտ (Լոռու մասնաճյուղ), ք.Վանաձոր
8. Смолкин А.М.,Методы активного обучения.М., 1991